24. ՏԸՂԱՆ ՀՈՐԸ ՓԵՇԱԿԸՆ Ա ՍԸՎԵՐԸՄ

Ինում ա, չինում մին մարթ մին կընեգյ, ըտհանց ինում ա մին տրղա։ Մարթը շատ լավ վրերս անող ա ինում։ Պրռավրմ ա, կնգանը ասրմ.—Դե յրես ըսօր՝ էքյուց մրոնրլական ըմ, ամմա հանց կանիս խոխան փեշակրս սրվերե վուչ հա՞։ Պեն ա, վեր քյրեզ անշուկ չօնե՞, կասիս, վեր միշտ աչ ղոլի յրա վրերսե քյինի։

Հաՙրը մեռնրմ ա։ Կնեգյը, տղան վեր մրծանրմ ա, տանրմ ա, թաՙ փեշակու տա։ Հինչ փեշակու տամ ա՞, տրղան փախճում ա, կյամ, հինչ փեշակու տամ ա, փախճում ա, կյամ։

Վեր մրծանրմ ա, տրղան հոր թվանգյը յոր ա օնրմ, պատրոնդաշը կապում, քյինում։

Քյինում ա միշտ բիդի աչ, վրերս անրմ, կյամ տոն։

Մին օր էլ ասրմ ա. «Բիդի ծեխ ըմ քյինաՙկանն»։

Բիդի ծեխ վեր քյունում ա, շատ ա քյունում, թաՙ խրեդյ, մին էլ ա տրեսնրմ մին ալավ ա ըռրչան կյամ։ Թվանգյը թուչ ա օնրմ, յրրա անրմ հանգյում ա, քյինում ա տեսնում մին ղուշ ա վեր ընգած, ամմա հաՙլա սաղ։ Պիրում ա տոն, վեր տանն ա տինում, հանց իշեղ ա տամ, քըշեր-ցիրեկ, վեր լոխ մաթ ըն մրնրմ։

Թաքավերը ըտրա սաՙսը վեր ըսկանում ա, հրամմայում ա, կյամ ըն ըտրա տանան ղուշը տանրմ թաքավերեն պալատը։

Էտ ղուշը լոՙս ա տամ, ամմա խրեդյ ա լոՙս տամ։ Թաքավերը հրվաքրմ ա ուրաՙն իմաստուններեն, ժողով ըն անրմ։

Թաքավերը ասրմ ա.— Դե հո՞ւնց բիդի անինքյ, վեր ես ղուշը

լուս տա, մին իմաստուն ասում ա.— Թաքավերըն ապրած կենա, վեր փիղու վրսկեռա տոն շինիս, էտ ղուշը մաչին տինիս, սաղ թաքավերութունիտ լուս կտա։

— Պա հո՞ւ կանե, հո՞ւ չանել։

Մին իմաստուն էն բուրշան ասում ա.— էտ լուսը պիրող տըղան կպիրի։

Թաքավերը ասում ա.— էտ տըղեն ծեն տըվեքյ, կյա ըստեղ։

Ծեն ըն տամ, պիրում թաքավերեն կոշտը։

Թաքավերը ասում ա.— Ցա քյինի փիղու վրեսկեռ պեր, վեր մին պալատ շինին, յա էլ կըլոխըտ կըտըրլական ըմ։

էտ տըղան ասում ա.— Դե մին օր մոհլաթ տո, մըտածիմ։

Տըղան տուս ա կյամ, ռեքյեփ մին հըղըցավ քինիյիս, մին մեծ մարթ ա շհում, ասում.— Վերթիս, խե՞ ռեքյեփ ըս։

Տըղան նաղլ ա անում, վեր թաքավերը իստի, իստի պեն ա ասում։

էտ պառավ մարթը ասում ա.— Դարդ մեր անել, քյինի թաքավերան քառասուն օղտապեռնը կյինի օգի, քառասուն օղտապեռնը արաղ։ Վեր տա, կըտանիս փիղեն աշխարքը, էն ա ընդեղ մին քյահրիզ կա, ամմեն քյունող կյամ ա ճուր խըմըմ։ Քյահրիզը կրկըտրիս, կյինին, արաղը ածիս մաչը։ Փիղերը կյըլական ըն խըմի՞ն, հարփին։ Տու կյողլը կկենաս, վեր խըմին վեր տեռնան, կըսկսիս վրսկըռքըհան անելը։ Վրեսկեռը օղտերեն կըպեռնիս, պիրիս։

էտ տըղան մին խիլլա շնուրհակալ ա տեռնըմ։ Ծտնան կյամ ա, թա.— Թաքավերը ապրած կըենա, դե քյինիլը քյինում ըմ, մինակ քառասուն պեռնը կյինի, քառասունն էլ արաղ պիդի տաս։

Թաքավերն ասում ա.— Աշկես յըրա։

Հըրամմայըմ ա, դաստի պեռնըմ ըն օղտերը, էտ տըղեն տամ։ Օղտերը ուրուր անա կապըմ ա, մինին կապան փըռնում, հայդա քյինում, յա՞ բա՞խտ, հի՞նչ կինի՞, կինի՞։

Քյինում ա, քյինում, հըսնում ա էն քյըհրիզեն։ Ճուրը կըտրում ա։ Վեր կյամ ա քյսորեն վախտը, կյինին նան արաղը ածըմ ա նավը, լըցնում, ինքյը կյողլը կենում։ Տեսնըմ ա ըհը՝ էն ա փիղերը կյամ ըն։ Մին թող ա պիցրանըմ, սաղ աշխարքը օնում ա։

Կյամ ըն, հի՞նչ ըն կյա՞մ... Եկեն, եկեն խըմեցեն, վեր տեռեն, խմեցեն, վեր տեռեն...

էն տըղան ղամանն քաշում ա, շընըրներեն ինում, լոխճին մըրթոտում ա, վրսկըռըհան անըմ, վեսկեռը սարու նըման կյուտում ա։ Վեր լոխ մորթում ա, վրսկռնեն ճոկում, պիրում ա օղտերեն պեռնըմ, կյամ։

Խաբարը կյամ ա, վեր տըղան վըեսկեռը պիրում ա։

Էտ տըղան պիրում ա թաքավերեն պըլատեն ըռաչին վեր ածում։ Պիրըմ ըն մին պալատ շինում փիղու վըեսկեռա, էն ղուշը տինում մաչին, սաղ ուրան թաքավերութունը լուսավերը՝մ։

Էտ թաքավերը տըղեն ասըմ ա.— Հի՞նչ ըս օղում։

Տըղան ասըմ ա.— Ախճիգյըտ։

Թաքավերը պիրում ա էտ տըղեն փսակում, տինում ուրան պըլատըմը, թաքավերութունեն կեսըն էլ տամ ուրան։

Էտ տըղան ուրան մարը պիրում ա կոշտը, առոք, փառոք ապրում ըն։